**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**

**Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ 1998 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 290-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱ-ԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Դավիթ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1.** 2023 թվականի օգոստոսի 8-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Դավիթ Հարությունյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով վերջինս խնդրել է.

«1. Հաշվի առնելով վերը բերված փաստարկներն ու հիմնավորումները՝ գտնում ենք, որ Քրեական դատավարության օրենսգրքի (ՀՕ-248, 01.07.1998) 290-րդ հոդվածի 1-ին մասը[1]՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, հակասում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասին[2]:

[1] Դիմումը և դրանով ներկայացված դիրքորոշումները վերաբերում են 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված, 1999 թվականի հունվարի 12-ին ուժի մեջ մտած և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժը կորցրած (բացառությամբ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության ՀՕ-306-Ն օրենսգրքի 483-րդ հոդվածով նախատեսված դեպքերի) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասին:

[2] Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած Դիմողն իր անհատական դիմումի խնդրամասում չի ներառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրության 61-րդ հոդվածին հակասելու վերաբերյալ պնդում, սակայն հիմնավորումների հատվածում անդրադարձել է նաև հիշյալ հոդվածին, ուստի՝ Սահմանադրական դատարանի կողմից կդիտարկվի և քննարկման առարկա կդառնա նաև Սահմանադրության 61-րդ հոդվածը:

2. Վերոգրյալի հիման վրա Դիմողը խնդրում է Քրեական դատավարության օրենսգրքի (ՀՕ-248, 01.07.1998) 290-րդ հոդվածի 1-ին մասը՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ճանաչել անվավեր»:

**2.** Ներկայացնելով թիվ ԵԴ/0397/11/22 գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը նշում է, որ իր նկատմամբ կիրառված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը՝ դատարանների կողմից տրված մեկնաբանությամբ, հակասում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասին:

Դիմողը գտնում է, որ ինչպես Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, այնպես էլ վերաքննիչ քրեական դատարանը, առանց որևէ հիմնավորման և որևէ կերպ անդրադառնալու Սահմանադրական դատարանի ՍԴՈ-844 որոշմանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը մեկնաբանել են իր հիմնական իրավունքները սահմանափակող ձևով և նույն օրենսգրքի 174.3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջի («Ծանուցագրում նշվում են՝ (...) հարուցված քրեական գործի հիմքում դրված փաստը») խախտումը բացառել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի գործողության ոլորտից:

Դիմողի պնդմամբ՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի և վերաքննիչ քրեական դատարանի կողմից վիճարկվող դրույթին տրված սխալ մեկնաբանությունը, ըստ որի՝ մինչդատական վարույթում վկային ուղարկված ծանուցագրում հարուցված քրեական գործի հիմքում դրված փաստը չնշելը դատական բողոքարկման ենթակա չէ, հակասում է Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին մասին:

Դիմողը նաև գտնում է, որ վիճարկվող դրույթին տրված սխալ մեկնաբանությունը հնարավոր է հանգեցնի նաև Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտման: Հավելելով՝ Դիմողը նշում է, որ եթե անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը խախտված է, ապա այդ պայմաններում դատական պաշտպանությունը չի կարող արդյունավետ լինել:

**3.** Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ինչպես նաև ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

**3.1.** Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում: Հիշյալ դրույթը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

*ա/ երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,*

*բ/ երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,*

*գ/ երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:*

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրվել է, որ *«(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:*** *(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ,* ***դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:***

Սահմանադրական դատարանը վերոնշյալ՝ ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե* ***իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:***

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նաև փաստել է, որ *«անհատական դիմումների ընդունելիության վավերապայմանների սահմանումն ինքնանպատակ չէ:* ***Այդ վավերապայմանների նպատակն է ապահովել սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատություն իրականացնելու իր գործառույթի պատշաճ և արդյունավետ իրացումը՝*** *դատարանին ծերբազատելով ինչպես անհիմն դիմումներից և դրանց հետևանքով սահմանադրական դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին, այն է՝ ընդհանուր արդարադատության իրականացումը Սահմանադրությանը համապատասխանող օրենքների հիման վրա ապահովելուն»:*

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ*

*խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն* ***ակնհայտ անհիմն է:*** Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանը հանգում է, որ՝

դիմողը վկայակոչել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասությունը Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ դատական պաշտպանության և 64-րդ հոդվածով երաշխավորված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքներին, սակայն **բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և իր՝ Սահմանադրության 61 և 64-րդ հոդվածներով երաշխավորված հիմնական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը: Փոխարենը՝ Դիմողը սահմանափակվել է զուտ վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ Սահմանադրության համապատասխան հոդվածներին հակասելու վերաբերյալ դիրքորոշման վկայակոչմամբ:**

Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստում է, որ **սույն դիմումով չի հիմնավորվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասությունը Սահմանադրության 61 և 64-րդ հոդվածներով երաշխավորված հիմնական իրավունքներին:**

Ուստի՝ հաշվի առնելով վերոշարադրյալը և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը Սահմանադրական դատարանի կողմից **ենթակա է մերժման՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

**3.2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի*

*քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ **վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր**:

Նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման իրավաչափության հարցի քննարկման պարագայում Սահմանադրական դատարանը կստանձնի դատական ակտ վերանայող դատական ատյանի գործառույթ, որը ոչ միայն չի բխի Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումներից, այլև փաստացի կվերացնի Սահմանադրական դատարանի և եռաստիճան դատական համակարգում գործող դատարանների գործառույթների տարանջատումը:

**Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի, ինչպես նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատումը:**

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վեր-

ջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ձևականորեն վիճարկելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը, **ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես՝ Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«(...) Ինչպես Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը, այնպես էլ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, արձանագրել են ՔԴՕ 174.3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջի («Ծանուցագրում նշվում են՝ ... հարուցված քրեական գործի հիմքում դրված փաստը») խախտման փաստը, սակայն պնդել են, որ այդ խախտումը դատական բողոքարկման ենթակա չէ»:*

Դիմողը նաև նշել է. *«(...) Մինչդեռ, ինչպես Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը, առանց որևէ հիմնավորման և առանց որևէ կերպ անդրադառնալու ՍԴՈ-844 որոշմանը, ՔԴՕ 290 հոդվածի 1-ին մասը մեկնաբանել են դիմողի հիմնական իրավունքները սահմանափակող ձևով և ՔԴՕ 174.3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված պահանջի («Ծանուցագրում նշվում են՝ ... հարուցված քրեական գործի հիմքում դրված փաստը») խախտումը բացառել են ՔԴՕ 290 հոդվածի 1-ի գործողության ոլորտից»:*

Հաշվի առնելով վերոշարադրյալը և նկատի ունենալով Դիմողի կողմից դիմումում ներկայացված մյուս դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ վերջինս **վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են դատարանների, մասնավորապես՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի և վերաքննիչ քրեական դատարանի **գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափությանը:**

Ելնելով ողջ վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատում, այլ դատարանների, մասնավորապես՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի և վերաքննիչ քրեական դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտերի) իրավաչափության ստուգում, որը **դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:**

Ուստի՝ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման նաև՝** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված՝ **դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական** դատարանին ենթակա չլինելու հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Դավիթ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ** **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

30 օգոստոսի 2023 թվականի
ՍԴԱՈ-97